ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«20» ապրիլի 2026թ. N 58-Ն

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1-ին հոդվածի 3-րդ մասի 31-րդ կետով, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի օգոստոսի 23-ի N 06-Ն հրամանի 1-ին հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի «ե» պարբերությունը և 15-րդ կետը, որակավորման հանձնաժողովի 2026 թվականի ապրիլի 8-ի N 5 արձանագրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի կողմից 2026 թվականի մարտի 20-ին և ապրիլի 10-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացված քաղաքաշինության բնագավառում նախատեսվող շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող «Էլեկտրաէներգետիկայի ոլորտում շրջակա միջավայրի պահպանություն» միջոցառման ծրագիրը և ծրագրին շնորհել 10 կրեդիտ:
2. Հաստատել «Էլեկտրաէներգետիկայի ոլորտում շրջակա միջավայրի պահպանություն» միջոցառման իրականացման ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 1-ին կետով նախատեսված միջոցառման կազմակերպչին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

4/20/2026

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի

2026 թվականի մարտի 20-ի N 58-Ա հրամանի

«Էլեկտրաէներգետիկայի ոլորտում շրջակա միջավայրի պահպանություն»

միջոցառման ժամանակացույց

Հ/Հ	Ամսաթիվ	Ժամ	Թեմայի անվանում	Միջոցառման պատասխանատու	Դասընթացների անցկացման ձևաչափը և վայրը	Միջոցառման կրեդիտները	Հավաստագրման ենթակա համապատասխան մասնագիտությունը	Մասնակցության վճարի չափը
1	2	3	4	5	6	7	8	9
1	Ապրիլի 25-Մայիսի 11	Ուրբաթ օրերին 16.00-ին, շաբաթ օրերին՝ 10.00	Էլեկտրաէներգետիկայի ոլորտում շրջակա միջավայրի պահպանություն» դասախոսություն	Վարդան Համբարյան, Էդուրադ Կուրղինյան	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան, 10-րդ մասնաշենք, 5-րդ հարկ, լսարան 10507, 2-րդ մասնաշենք, 2-րդ հարկ, լաբորատորիաներ 2226, 2235, 2236	10 կրեդիտ	1-ին կարգի մասնագետ, 2-րդ կարգի մասնագետ մասնագետ **07-10** մասնագիտություններ	80.000 դրամ